ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանի՝ Ավստրիայի Հանրապետությաուն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անուն, Ազգանունը՝ Արթուր Հովհաննիսյան

Զբաղեցրած պաշտոնը՝ արդարադատության նախարարի առաջին տեղակալ իրավական ապահովման վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետները՝ Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն, 2017թ. հուլիսի 3ից -6-ը

Հրավիրող կողմ՝ Միացյալ Ազգերի Կազմակերպություն (ՄԱԿ)

Գործուղման նպատակը՝ մասնակցություն ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) 50-րդ հոբելյանական նստաշրջանի շրջանակներում կայանալիք UNCITRAL կոնգրեսին:

Քննարկված թեմաները

Նստաշրջանի ընթացքում ներկայացվեց UNCITRAL-ի երկարամյա ներդրումը միջազգային առևտրային իրավունքի զարգացման և ներդաշնակեցման գործում, դիտարկումներ արվեցին UNCITRAL-ի մոդելային փաստաթղթերի և ուղեցույցների օգտակարության մասին, շեշտադրում կատարվեց ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ կիրառման միջոցով միջազգային առևտրի խթանմանը, քննարկման առարկա դարձվեցին սնանկությանը վերաբերող և գրեթե բոլոր երկրներում տիպիկ խնդիրներ (կազմակերպության առողջացման ցածր մակարդակ, սնանկացման գործընթացների երկարատևություն և անարդյունավետություն), ներկայացվեցին միջազգային առևտրային վեճերի լուծման մեխանիզմների վերջին ժամանակի զարգացումները:

Հանդիպումները, ելույթները, և քննարկված հարցերը

Նստաշրջանին ելույթ ունեցան Չինաստանի, Կորեայի, Գերմանիայի, Իսպանիայի, Կանադայի, ԱՄՆ-ի, Եվրամիության, Իտալիայի, Բրազիլիայի, Չեխիայի, Ճապոնիայի, Մեծ Բրիտանիայի և մի շարք այլ երկրների ներկայացուցիչները և հայտնեցին իրենց դիրքորոշումները վերը նշված քննարկման առարկաների վերաբերյալ, ներկայացվեց տեղեկատվության փոխանակման նոր՝ blockchain տեխնոլոգիան և դրա կիրառման

հեռանկարները: Խոսվեց կրիպտոարժույթի (օրինակ՝ bitcoin) վրա որպես հայցի ապահովման միջոց կամ որպես դատական ակտի հարկադիր կատարման եղանակ, արգելանք դնելու հնարավորություն տալու անհրաժեշտության մասին, որին հասնելու համար, անխոս, կարևորվում է UNCITRAL-ի դերակատարությունը: Ներկայացվեց Չինաստանի փորձը շարժական գույքի գրավի կիրառման վերաբերյալ:

Քննարկվեցի նաև ներդրող-պետություն վեճերի լուծման հետ կապված խնդիրները: Այս հարցում կարևորվեց վեճերի լուծման ժամանակ ապաքաղաքական մոտեցումը և արբիտրաժի թափանցիկությունը: Հանդիպման ավարտին քննարկվեց UNCITRAL-ի հետագա անելիքները միջազգային առևտրային վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմների մշակման և զարգացման գործում:

ՀՀ արդարադատության նախարարի
առաջին տեղակալ՝

Արթուր Հովհաննիսյան

07.07.2017թ.